ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և հիմք ընդունելով ‹‹Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին›› օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Տպագրված է ընդամենը 5 օրինակ
Բաղկացած է 2 էջից, կազմված է
«---» ----------2021 թ.
Օրինակ---------

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«---» --------- 2021թ.
N--- -Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

…… Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆՈՒՄ
Գրանցման ամսաթիվը՝ 15.10.2010թ.
Գրանցման թիվ՝ 286.210.07718
Վկայական՝ 03Ա089458
ՀՎՀՀ՝ 02523863
Թիվ ---- փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի գործակալությունում

« » ----------2021թ.

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

2021թ.

‹‹Բնակչության հատուկ սպասարկում›› համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1. Կանոնադրության 2.1-րդ կետը լրացնել՝ հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ ենթակետով.

«6) Հարազատ չունեցող և սոցիալապես անապահով անձանց հուղարկավորության կազմակերպում:»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 15.10.2010թ. պետական ռեգիստրում գրանցված ‹‹Բնակչության հատուկ սպասարկում›› համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ 2010թ. կանոնադրության համաձայն՝ կազմակերպությունը մատուցում է հուղարկավորության կազմակերպման ծառայություններ:

Հիմք ընդունելով «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքը և ուսումնասիրելով Երևան քաղաքում հուղարկավորություններ իրականացնող անձանց պահանջմունքը, առկա խնդիրները և հուղարկավորությունների կապակցությամբ առաջացող խոչընդոտները, անհրաժեշտություն է առաջացել մատուցել նաև հարազատ չունեցող և սոցիալապես անապահով անձանց հուղարկավորության կազմակերպման ծառայությունները:

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը կանոնադրությամբ այսուհետ ստանձնելով համայնքի կողմից հուղարկավորությունների հետ կապված ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ պետք է առաջնորդվի վերոնշյալ օրենքի դրույթներով և ապահովի վերջիններիս ապահովումը (մասնավորպես 13-րդ հոդվածի 2-րդ կետը):

Հիմք ընդունելով վերոնշյալ օրենքը, կարևոր է ընդգծել օրենքի 15-րդ կետի դրույթները, որի ապահովման դեպքում կլուծվի նաև ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձանց հուղարկավորության հետ կապված խնդիրները:

Նշված ծառայության մատուցմամբ կավելանան կազմակերպության եկամուտներն, արագընթաց ընթացակարգով կլուծվի հարազատ չունեցող և սոցիլապես անապահով անձանց (13-րդ հոդվածի 2-րդ կետը), ինչպես նաև ազատազրկման վայրերում, բուժհաստատություններում, ծերանոցներում և մանկատներում մահացած անձանց (15-րդ հոդված) հուղարկավորության կազմակերպման խնդիրը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել Երևանի ավագանու քննարկմանը ներկայացնել «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու կապակցությամբ այլ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Բնակչության հատուկ սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2021թ.-ի բյուջեով նախատեսված եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ